զօրք Օսմանցւոց անդր հասին. Նորա փախուցեալ ի Նոցանէ, անկաւ առ փաշային, որոյ հրամանաւն առեալ զընտանիսն՝ գնացեալ բնակեցաւ ի Գաղատիա. և էառ զներուումն ի Հայրապետէն Հռոմայ»։ (61 երես.)

Այս և ուրիշ մէջբերումէ մը յետոյ Ղլղճեան կը հետեւցնէ թէ «Աւետիք յուսահատուած թողնում հեռանում է հայրենիքից և ապաստանում ի Գաղիա[1]»։ Եւ թէեւ ինք ալ իր կարգին զարմանք կը յայտնէ Աւետիքի այդ վարմունքին, սակայն կը խոստովանի թէ կեղծիք չկայ Ձեռագրին մէջ, և հետեւաբար ստոյգ է որ Աւետիք Հռոմ գացած է, հակառակ Գուլամիրեանի բնագրին որ կեղծիք ըրած է դերեր փոխելով. ահա թէ ի՞նչ կը գրէ Ղլղճեան, հակառակ անոր որ ոչ մէկ յարում կամ սէր ունի դէպի Կաթողիկէ եկեղեցին և անոր գլուխը.

«Մտածել ձեռագրի մէջ կեղծիք մտած լինելու մասին՝ շատ դժւար է։ Մենք հակուած ենք կարծելու, որ այն ձեռագիրը որից արտատպուած է Դաւիթ բէկի պատմութիւնը, դժւար թէ չունենար այն կտորները որ մենք առաջ բերինք։ Մեզ թւում է, որ պարզամիտ ազգասիրութեամբ «Գաղատիա» գաղթելը վերածւել է Երուսաղէմ ուխտ գնալուն, և Հռոմի քահանայապետից ներում խնդրելը՝ Հայոց պատրիարքից ներում խնդրելուն և այլն[2]»։

Ի հաստատութիւն Աւետիքի Հռոմ երթալուն կ՝արժէ մէջ բերել Ղլղճեանէ յիշուած յիշատակարաններէն հետեւեալն ալ, որ շատ խօսուն է և ուր եթէ կեղծիք չի գործուիր, սակայն իսկապէս մոլեռանդութիւն, դատապարտելով Աւետիքը իր այդ արարքին համար.

«Դարձեալ յայտ լիցի սիրելի և բարեպաշտ ընթերցողացդ, զի ի 39 թղթահատմարի անտ յիշի ի քաջազօր քահանայէն Աւետիքէ, թէ յետ այսքանեաց յաղթութեանցն և ի մրցմունս սատկալի պատերազմացն, յերկեալ ի փաշայէն, զի մի ըմբռնեալ սպանանիցեն, հանդերձ ընտանեօքն փախստական լեալ գայ հասանի ի յերկիրն Գաղատիա. և անդ ենթարկեալ զինքն ընդ հրամանօք Պապին (ընկալնոյր զներումն մեղանացն) այլ արդէն սակաւիկ ձանձրութիւնս տալս իմ սիրեցեալդ, միայն հրաբորբոք բաղձանացս վասն հայրենեացս իմոց առ այս գործ ձեռնամուխ արար ինձ. սակայն չգիտելով զանունն պատմագրողին զի մարթանայի ընդ նմին եւս պատասխանել նմա՝ վասն գրելոյն իւրոյ թէ (ընկալաւ զներումն ի սրբազան Պապէն), բայց այս եւեթ ունիմ յԱւետիք քահանայէն, զի աւա՜ղ կուրութեանս մտաց զի զառաջին սրբութիւնն անարգեալ...»։

Զանց կ՝ընեմ անվայել և ծանր խօսքերը որ դեռ կը շարունակուին, մինչեւ առաքելական խօսքերով նզովելը Աւետիքի այդ պատմական արարքը. «Եկ ի մէնջ, այլ ոչ էր ի մէնջ, զի եթէ ի մէնջ էր, ճնայր առ մեզ» եւն։

Կը համարիմ թէ ի զուր է դեռ երկարել և նոր փաստեր որոնել, քանի որ հակառակորդներն ալ կը խոստովանին թէ Աւետիք Հռոմ գացած է և ոչ Երուսաղէմ։

Շինելու համար գայթակղած մտքերը՝ վերի յիշատակարանի կարեկցելի նախանձայոյզ հեղինակին, Գուլամիրեանի և նըմաններու, որոնց այնքան խորթ և մինչեւ դատապարտելի կը թուի Աւետիք քահանայի ըստ ինքեան ամենագովելի արարքը, կը բաւէ աչքէ անցնել մեր Հայրերու վարդապետական գրուածներ ու եկեղեցական մատեանները, սորվելու համար մեր Հայ Եկեղեցւոյ և անոր հարազատ և ուղղափառ զաւակներուն՝ Հայ Հայրապետներուն և Վարդապետներուն հաւատքին, յարգանքին և սիրոյն չափը առ.

«Սուրբ եւ առաջին ամենայն եպիսկոպոսաց՝ Հայրապետն Հռոմայ եւ փոխա-

---

1. Ձհասկացանք թէ այս ձեւը զրչի վրիպակ մըն է, թէ՝ գիտումնաւոր։ Ստորեւ սակայն Գաղատիա կը դնէ ձեռագիրներուն համեմատ։

2. Ազգային պատմութեան ուսումնասիրութիւններ և դասագիրքեր՝ զրեթէ առանց բացառութեան, դժբախտաբար ամէնքն Գուլամիրեանի օրինակի կեղծիքին հետեւած են հակառակ Զամչեանի, և հակառակ Ղլղճեանի այդ մերկացումներուն։ Այսպէս վերջիններէն՝ Կիւթէմպերկ մատ. թ. 8 Պատմ. Հայոց (1911, էջ 411), Հ. Ս. Տէր Մովսէսեան (1914), Յ. Զազմազճեան (1917) եւն։